# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ս.թ. սեպտեմբերի 10-11-ը «Դոմ Մոսկվի» Երևանում մոսկովյան մշակութագործարարական կենտրոնը Հայաստանի շախմատի ակադեմիայի հետ համատեղ կազմակերպում է շախմատի կայծակնային մրցաշար՝ նվիրված Մոսկվայի օրվան:

Մրցաշարի **կիսաեզրափակիչ փուլը** տեղի կունենա Հայաստանի շախմատի ակադեմիայում (ք. Երևան, Շևչենկո 34), իսկ **եզրափակիչ փուլը**՝ «Դոմ Մոսկվի» Երևանում մոսկովյան մշակութագործարարական կենտրոնում (ք. Երևան, Արգիշտի 7):

## Մասնակիցներ

Կիսաեզրափակիչ մրցաշարին կարող են մասնակցել առնվազն երրորդ շախմատային կարգ ունեցողները:

Մրցաշարը կանցկացվի շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով՝ համաձայն ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների:

Կիսաեզրափակիչ մրցաշարում 1-6-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցները անցնում են եզրափակիչ փուլ:

Եզրափակիչ փուլը անցկացվում է շրջանային մրցակարգով 14 մասնակիցների միջև:

Միջազգային գրոսմայստերները իրավունք ունեն մասնակցելու միանգամից եզրափակիչ փուլին:

## Ժամանակացույց

10 սեպտեմբեր – 11:00
11 սեպտեմբեր – 12:00

## Ժամակարգ

3 րոպե ամբողջ պարտիայի համար՝ յուրաքանչյուր քայլի համար 2 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

## Կիսաեզրափակիչ մրցաշարի լրացուցիչ ցուցանիշներ

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակային տեղերը կորոշվեն ըստ՝

ա) հատված Բուխհոլցի (-1) գործակցի,

բ) Բուխհոլցի գործակց,

գ) անձնական հանդիպման արդյունքի (գործում է միայն այն դեպքում, երբ հավասար միավորներ վաստակած բոլոր մասնակիցները խաղացել են միմյանց դեմ)

դ) սևերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի,

ե) հաղթանակների առավելագույն քանակի:

# ԿԱՅԾԱԿՆԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐ՝
# ՆՎԻՐՎԱԾ ՄՈՍԿՎԱՅԻ ՕՐՎԱՆ

## Մրցանակային ֆոնդ

**Մրցանակային ֆոնդը կազմում է 500 000 ՀՀ դրամ:**

Մրցաշարի կիսաեզրափակիչ փուլի մրցանակային ֆոնդը 200 000 դրամ է:

Մրցաշարի եզրափակիչ փուլի մրցանակային ֆոնդը 300 000 դրամ է:

Մրցանակակիրները կպարգևատրվեն նաև գավաթներով, մեդալներով և դիպլոմներով:

| **Կիսաեզրափակիչ մրցաշարի մրցանակներ** | **I** | **II** | **III** | **IV** | **V** |
|---|---|---|---|---|---|
| Հիմնական | 50 000 | 30 000 | 20 000 | 15 000 | 15 000 |
| **Հատուկ մրցանակներ** | | | | | |
| Լավագույն արդյունք ցույց տված շախմատիստուհի | | | | 10 000 | |
| Լավագույն արդյունք ցույց տված մինչև 12 տարեկան մասնակից | | | | 10 000 | |
| Լավագույն արդյունք ցույց տված մինչև 12 տարեկան աղջիկ մասնակից | | | | 10 000 | |
| Լավագույն արդյունք ցույց տված մինչև 10 տարեկան մասնակից | | | | 5 000 | |
| Լավագույն արդյունք ցույց տված մինչև 10 տարեկան աղջիկ մասնակից | | | | 5 000 | |
| Լավագույն արդյունք ցույց տված մինչև 8 տարեկան մասնակից | | | | 5 000 | |
| Լավագույն արդյունք ցույց տված I որակավորման կարգի մասնակից | | | | 5 000 | |
| Լավագույն արդյունք ցույց տված II որակավորման կարգի մասնակից | | | | 5 000 | |
| Լավագույն արդյունք ցույց տված III որակավորման կարգի մասնակից | | | | 5 000 | |
| Լավագույն արդյունք ցույց տված օտարերկրյա մասնակից | | | | 10 000 | |

| **Եզրափակիչ մրցաշարի մրցանակներ** | **I** | **II** | **III** | **IV** | **V** | **VI** |
|---|---|---|---|---|---|---|
| Հիմնական | 85 000 | 65 000 | 50 000 | 40 000 | 30 000 | 30 000 |

**Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում:**

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ստանալու միայն մեկ մրցանակ:

## Մուտքավճար

Կիսաեզրափակիչ մրցաշարում միջազգային գրոսմայստերները չեն կարող մասնակցել:

| **Կոչում/գործակից** | **Մուտքավճար** |
|---|---|
| ՄՎ,ԿՄԳ,ԿՄՎ | անվճար |
| Վարկանիշ, շախմատային առաջին, երկրորդ և երրորդ կարգ ունեցողներ | 2 000 ՀՀ դրամ |

Մրցաշարի գրանցման վերջնաժամկետն է **ս.թ. սեպտեմբերի 8-ը, ժամը 18:00:**
Գրանցման համար սեղմել հետևյալ հղումը՝ https://forms.gle/BpUcAU9kdjANPXdg9

Հասցե՝ Շևչենկո 34, ք. Երևան, 0050, ՀՀ
Էլ. հասցե՝ info@hessacademy.am

Հեռ.՝ +374 10 44 84 79
Բջջ.՝ +374 43 44 84 73